ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ
ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ
ԹԻՎ 4 «ՁՆԾԱՂԻԿ»
ՄՍՈՒՐ-ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ ՀՈԱԿ
ՀՀ , ք.Էջմիածին, Լ. Ազգալդյան 7
Հեռ. +374 (231) 55361
Էլ. փոստ: tiv4dzntsakhik@mail.ru

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
АРМАВИРСКИЙ МАРЗ
ДЕТСКИЙ САД-ЯСЛИ №4
"ДЗНЦАХИК" ОНО МЭРИИ ГОРОДА
ВАГАРШАПАТА
РА, г. Эчмиадзин, ул. Л. Азгалдяна 7
Тел.: +374 (231) 55361
Эл.почта: tiv4dzntsakhik@mail.ru

REPUBLIC OF ARMENIA, ARMAVIR MARZ, "DZNTSAGHIK" №4 KINDERGARTEN AMD NURSERY CNPO OF VAGHARSHAPAT MUNICIPALITY
Address: 7 L. Azgaldyan Str., Ejmiatsin, RA, Tel. +374 (231) 55361, E-mail: tiv4dzntsakhik@mail.ru

№ 241

«01» հուլիսի 2026 թ.

ՊՐԵՍՏԻԺ-ՖՈՒԴ» ՍՊԸ-Ի
ՏՆՕՐԵՆ Ս. ԱԶԱՏՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Ազատյան,

Վաղարշապատի համայնքապետարանի թիվ 4 «Ձնծաղիկ» մսուր – մանկապարտեզ ՀՈԱԿ-ի (այսուհետ՝ Գնորդ) և «ՊՐԵՍՏԻԺ-ՖՈՒԴ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Վաճառող) միջև 2026 թվականի ապրիլի 15-ին կնքված N «ՀՀ ԱՄՎՀ ՁՄՊ ԳՀԱՊՁԲ 26/4-4» ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) համաձայն Ձեր ընկերությունը պարտավորվել է պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը:

2026 թվականի հունիսի 30-ին Գնորդը ստացել է Ձեր գրությունն առ այն, որ Վաճառողը հրաժարվում է մատակարարել պայմանագրի 21-րդ, 25-րդ, 45-րդ, 61-րդ և 62-րդ չափաբաժիններով սահմանված սապրանքները:

Ելնելով վերոգրյալից՝ Վաղարշապատի համայնքապետարանի թիվ 4 «Ձնծաղիկ» մսուր – մանկապարտեզ ՀՈԱԿ-ը, հիմք ընդունելով 2026 թվականի ապրիլի 15-ին կնքված N «ՀՀ ԱՄՎՀ ՁՄՊ ԳՀԱՊՁԲ 26/4-4» ծածկագրով գնման պայմանագրի 2.1.7.1 կետի բ) ենթակետը, 2026 թվականի հուլիսի 2-ից մասնակի միակողմանի լուծում է վերոնշյալ պայմանագիրը 21-րդ, 25-րդ, 45-րդ, 61-րդ և 62-րդ չափաբաժինների մասով:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում, Պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա, լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Հարկ ենք համարում նաև նշել, որ համաձայն ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետի՝ պայմանագիրը մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում:

ՏՆՕՐԵՆ՝ Լ.Մանուկյան